

## «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծում



### *Ծրագրի նկարագիրը*

«Հին Երևան» նախագիծը իրականացվում է Գլխավոր պողոտայի տարածքում՝ մոտ 2.2 հա մակերես ունեցող՝ Արովյան, Փ.Բյուզանդ, Ե.Կողբացի և Արամի փողոցներով սահմանափակվող թաղամասում: Ծրագրի նպատակն է բարելավել պատմական կառուցապատված տարածքները, սահմանել կանոնավոր կառուցապատմամբ արգելոցային գոտի՝ ներգրավելով այն քաղաքի կենսագործունեության մեջ: Այս հատվածում պահպանվել է 19-րդ և 20-րդ դարասկզբի բնակելի տների ճարտարապետությանը պատկանող 14 հուշարձան: Դրանք կհամալրվեն նաև ապամոնտաժված այլ պատմական հուշարձաններով:

Ճարտարապետական նախագծի մտահղացման նպատակն է՝ վերստեղծել միջավայրը՝ արդիականացնելով տարածքը, ամրացնելով կիրառական ենթակառուցվածքները, միաժամանակ մեծացնելով տարածքի առևտրային և մշակութային նշանակությունը: Նախատեսվում են հարմարավետ սրճարաններ և ռեստորաններ, որոնք դուրս են գալիս դեպի բաց սրահներ և այգիներ, մասնագիտացած ցուցասրահների և թանգարանների խանութ-սրահներ, գեղարվեստական սրահներ, բարձրակարգ, ոչ մեծ հյուրանոցներ և այլն: Մշակութա-հասարակական թաղամասում նախատեսվում է 4 վերգետնյա հարկ, որից 2-ը վերականգնվող հուշարձաններն են, իսկ մյուս 2-ը՝ ավելացվում են: Նախատեսվում է նաև 3 ստորգետնյա հարկ, որից մեկը հուշարձանների մտանային հարկն է՝ հասարակական օգտագործման նպատակով: Երկու ստորգետնյա հարկերում նախատեսված է կառուցել ավտոկայանատեղ:


Նախագծի իրագործումը կնպաստի նաև զբոսաշրջության զարգացմանը:





**Տեխնիկական  
ցուցանիշներ**

Նախագիծն իրականացվում է Գլխավոր պողոտայի տարածքում՝ մոտ 2.2 հա մակերես ունեցող՝ Արոլյան, Փ.Բյուզանդ, Ե.Կողբացի և Արամի փողոցներով սահմանափակվող թաղամասում:  
Ընդհանուր մակերեսը՝ 120.000 քմ:





***Ծրագրի***

***Ժամկետներ***

Շինարարական աշխատանքների տևողությունը շուրջ 5 տարի է:

***Ծրագրի արժեքը***

Շուրջ 60 մլրդՀՀ դրամ

***Ներդրումների***

***ձևը և***

***հիմնական***

***պայմանները***

Ծրագիրն իրականացվում է մասնավոր ներդրումների ներգրավմամբ՝ ներդրողներ՝ «Օլդ սիթի» ՍՊԸ և «Սերգե-Ագոբիգ դեր-Սահագույան» ՍՊԸ:

***Ներկա***

***իրավիճակ***

Նախագծային աշխատանքներն իրականացվել են «ԼՎՔ» ՍՊԸ կողմից: Սկսվել են առաջին փուլի շինարարական աշխատանքները: